

Անոնք, այդ իսկ պայմաններով, մերը չեն: Մենք ունինք անոնց աս ու ան կէտին շատ-շատ գեղեր, բայց զանգը-լածը կը պատկանի թշնամիին: Կովկասէն հասնող երիտասարդը այդ մղձաւանջային ողբասականէն հագիւ պիտի յիշէ փապերը կամ սառնապատ ամայութիւնները: Մաթիկին դիւցազներգած կռիւները գրական թեմեր են, քան թէ օր մը մղուած ճակատամարտներ: Իբր տեղագրութիւն չեն ենթարկուիր ոչ մէկ ճշդումի: Անոնք տեղի կ'ունենային «մի գիւղում», աւելի ճիշդը՝ անոր մերձակայքը: Ընդհանրապէս անունը կը պակսէր, իր խուժ ու օտար հնչիւնին, ինչպէս ուռուցիկ ձեւով մը մաս բերելուն համար այդ ողբասականին: «Մի արտում», այդ գեղէն դուրս: «Մի աղբուրի շրջակայքում», կամ աւելի յաճախ՝ սարի մը կողերուն: Այս տարտամութիւնը իրական է սակայն: Միշտ սակաւաթիւ մարդերով, ու միշտ՝ յոգնախուժը «թշնամու» դէմ: Անոնք ճիշդ են, մեծ մասով, քանի որ անկէ յետոյ անձնական շփումներով փորձառութիւն ունեցայ ասպատակային կռիւներէն: Բայց մերիկները հասարակ չարագործներ էին ու լեռներուն վրայ իրենց հետապնդածը սուղկեկ մահ մըն էր: Ու կռիւը տարբեր կ'ըմբռնէին Մաթիկներէն: Թիզ-թիզ կը ճանչնային բոլոր խորշերը իրենց արքայութեան, որ հսկայ լեռնաստան մըն էր, ցանուցիր ու ցանցառ գիւղակներով: Անոնց քաջութիւնը չեմ ըներ խնդրոյ նիւթ: Անգամ մը մահուան գինուոր, երիտասարդը առիւծէն ալ վեր է իր սիրտով: Ի՛նչ որ Մաթիկը պատմած է այդ մարդերէն, պարուր-լած էին նոյն տարտամով ու գրքունակ պարզութեամբ: Բաւական Բաֆֆի էր գոց ըրած, այդ գործողութեանց տալու համար թերթօնական նկարագիր, որմէ այնքան կ'ախորժին դաւադրական ձեռնարկները ու մեր ամէնուն մէջ անմահ արկածի ոգին:

Այնպէս որ՝ ստիպուած եմ արագ անցնիլ այդ չափազանց շահեկան, բայց անբաւարար տեղագրուած կռուաբանութենէն: Կը ծանրանամ իր տուածներէն վանին վրայ, ուր բնակած է ամէնէն երկար: